



Լուսաբեր Չորրաջեան-Տէր Ղեւոնդեանը,
Հալէպ, հաւանաբար 1918ին

ԼՈՒՍԱԲԵՐ ՏԵՐ-
ՂԵՒՈՆԴԵԱՆԻ
ՅՈՒՇԵՐԸ
ԵՂԵՌՆԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՆՈՒՇ ԽԱՌԱՏԵԱՆ

Լուսաբեր Տէր-
Ղեւոնդեանը (ծն.
Չորրաջեան, Չորպաճեան)
ծնուել է Մարաշում 1902
թուականի Հոկտեմբերի
30ին: 1916ի դարնանը
ընտանիքի հետ տարագրուել
է հայրենի քաղաքից: 1916ի
վերջից մինչև 1920 ապրել է
Հալէպում: 1919ի Մայիսին
ամուսնացել է Նահապետ Տէր
Ղեւոնդեանի հետ: Մէկ տարի
անց ընտանիքը հաստատուել
է Կահիրէում: Այստեղ էլ
ծնուել են Նահապետի եւ
Լուսաբերի զաւակները՝
Հայկը (1920), Հայկուհին
(1923) եւ Արամը (1928):
1948ին, մեծ

հայրենադարձութեան վերջին կարաւանով Տէր-Ղեւոնդեանների ընտանիքը
Եգիպտոսից ներգաղթել է Հայաստան ու հաստատուել Երեւանում: 1966ին
աւագ որդու՝ Հայկի ընտանիքի հետ միասին Լուսաբերը տեղափոխուել է ԱՄՆ,
որտեղ էլ մահացել է 1990ի Յունիսի 20ին, 88 տարեկան հասակում:

Ներկայ յուշերը գրի է առել Լուսաբերի կրտսեր որդին՝ վաստակաշատ
հայագէտ-արարագէտ Արամ Տէր-Ղեւոնդեանը 1966ին: Բնագիրը մեքենագրել
եւ ծանօթագրել է Արամի որդին՝ Վահան Տէր-Ղեւոնդեանը: Լուսանկարները
տրամադրել է Արամ Տէր-Ղեւոնդեանի կինը՝ Սեդա Դեւէջեանը, իսկ
հարսանեկան նկարը ուղարկել է Լուսաբերի աւագ որդու՝ Հայկի որդին՝
Վարդան Տէր-Ղեւոնդեանը (ԱՄՆ):

1915 թուականին, երբ սկսուեց հայութեան տեղահանութիւնը, հօրս¹ իբրև նախկին հնչակեանի, Մարաշից տարան Հալէպ: Ընտրիւ դեղագործ Ստեփան եղբօրս մեր ընտանիքը մէկ տարի մնաց Մարաշում: Դեռ 1914 թուականին փոքր եղբայրս՝ Աետողը գնացել էր օսմանեան բանակ իբրև ենթասայալ:

Հօրս արտը գնալուց 7-8 ամիս յետոյ նրանից նամակ ստացանք, թէ՛ անձանօք ուղղութեամբ նորէն արտըրուած է:

1916 թուականին, Աւագ Երեքշաբթի օրը, Մարաշի տեղական իշխանութիւններից ծանուցում ստացանք, թէ պետք է մեկնել արտըրի:

Մեր ընտանիքը բաղկացած էր 7 հոգուց՝ մայրս, երկու քոյրերս [Արշալոյսը, Մ], եղբայրս [Ստեփանը], կինը [Անայիսը], անդրանիկ որդին եւ ես: 200 հայ ընտանիքի հետ ճանապարհ ընկանք: Աւագ Հինգշաբթի օր էր: Մեզ հետ ունէինք անմիջական անհրաժեշտ հագուստեղէն, ամանեղէն եւն.: Գնում էինք ջորիների վրայ՝ ժանդարմների հսկողութեան տակ, դէպի Միջագետքի անապատը: Ծանապարհին մեզ վրայ յարձակուեցին սուազակներ եւ միբանի հոգի սպանուեց: Կաշառքի միջոցով ազատուեցինք այդ սուազակներից եւ շարունակեցինք մեր ճանապարհը:

Չառուկի խթման երեկոյեան հասանք Այնթապ: Այստեղ մեր ունեցածի մի մասը բողեցինք ազգականների մօտ: Միս օրը՝ Չառուկի առաւօտեան, երկու-երեք ջորիներով (որը վարձով էինք վերցնում ջորեպաններից) ճանապարհ ընկանք դէպի Նիզիբ²: Նիզիբում միայն կէս ժամ մնացինք, որտեղից գնացինք Բիրեջիք³:

Բուն գիւղը [Բիրեջիքը] Եփրատի միս ավիին էր գտնում: Այստեղ երեք շաբաթ մնացինք վրանների տակ:

Բիրեջիքից որոշ հեռաւորութեան վրայ կար մի արաբական գիւղ, որտեղ եղբայրս [Ստեփանը] փորձեց մի ժանդարմի կաշառելով այնտեղ հաստատուել: Իմանալով այդ մասին, մի ուրիշ ժանդարմ (երեւի ատլի բարձր աստիճանով) մտրակով անխնայ ծեծեց եղբօրս: Յանկարծ պարզուեց, որ այդ ժանդարմը Բիրեջիքից հին ծանօթ է եղել եղբօրս, որը համալսարանն ատարտելուց յետոյ մի ժամանակ այնտեղ աշխատել էր որպէս դեղագործ: Ձղջալով իր արածի վրայ ժանդարմը փոխեց իր վերաբերմունքը եւ ներողութիւն խնդրելով նոյնիսկ ճանապարհին իր ձիու վրայ նստեցրեց մօրս եւ եղբօրս կնոջը՝ Անայիսին: Դրանից յետոյ նա մեզ հետ ճաշի էր նստում:

Ծանապարհին ունէինք մեր անձնական վրանը, որը Մարաշից մեզ հետ էինք բերել: Ուտում էինք Մարաշից մեզ հետ բերած չորեղէնը, իսկ ճանապարհին՝ Բիրեջիքում նոյնպէս, չորեղէն էինք գնել: Հաց, պանիր եւ միրգ էինք գնում թուրք եւ արաբ գիւղացիներից: Դէպի Մամրուց⁴ բնակչութիւնն արդէն արաբ էր:

Բիրեջիքից այն կողմ սկսեց մեր գողգործան: Ունէինք միայն մէկ ջորի, որի վրայ հերթով նստում էինք: Չորին տանում էր նաեւ մեր բեռները, իսկ ուտեստեղէնը մենք էինք տանում:



Չորրաջեանների ընտանիքը Մարաշում, 1905ին. առաջին շարքի փոքրիկը
Լուսաբերն է

Անէն երեկոյ իբր թէ 'աազակներ' էին յարձակում եւ ժանդարմաները կաշառք հաւաքելով հեռացնում էին նրանց: Մայրս իր մէջքին ունէր ոսկիների մի գօտի, որը գոյացել էր մեր տան իրերի շտապ վաճառքից (իսկ բուն տունը անտէր թողեցինք):

Երկու երեք օր քալելով հասանք Մամբուջ: Հազիւ նստել էինք հանգստանալու, երբ յանկարծ մի ժանդարմ եկաւ, թեւիցս քաշեց թէ՛ «կայմակամը՝ աղջիկ է ուզում»: Մայրս անմիջապէս նետուեց եւ ասաց, որ իր դիակի վրայով միայն կարող ես այդ անել: Տեսնելով որ անօգուտ է բռնանալ, ժանդարմը հեռացաւ: Ես այդ ժամանակ 14 տարեկան էի:

Մամբուջում կէս ժամ մնալուց յետոյ նորէն ճանապարհ ընկանք: Թէեւ Եփրատը շատ մօտ էր, բայց մեզ դիտմամբ տանում էին հակառակ ուղղութեամբ: Լրիւ մէկ օր մնացինք քացարձակապէս ծարաւ վիճակում: Վերջապէս մի տեղ հասանք, ուր ջուր էր լճացել: Մարդիկ իրար կոխկռտելով ընկան ջրի վրայ: Բայց այդպիսի կեղտոտ ջրով միայն կարելի էր լեզուն թրջել:

Երեկոյեան մի տեղ հասանք, ուր հանգիստ բնեցինք, քանի որ իբր թէ աազակներ չկային: Միս օրն էլ ցերեկը այնտեղ մնացինք: Ժամը 11ի ժամանակ նկատեցինք, որ հեռուից մի սեւ կէտ մեր կողմն էր գալիս: Տասներեքամեայ մի հայ աղջիկ էր, որին արարները խել էին եւ երեսները հաջի էին ծեծել [ղաջել]: [Աղջիկը] Մեր ոտքն ընկաւ եւ աղերսեց, որ իրեն քարցնենք: Բարեբախտաբար ժանդարմաները չէին նկատել եւ կարողացանք մեր վրանում պահել: Երեկոյեան դէմ եկաւ նրա արաք փետացուն՝ պահանջելով աղջկան: Ամբողջ կարաւանը միաբերան յայտարարեց, որ այդպիսի աղջիկ չկայ մեզ մօտ: Աղջիկը մնաց մինչեւ յաւարտ կայանը՝



Լուսաբերի և Նահապետի
ամուսնութիւնը, Հալէպ, 1919

Մեսրեմէ՞, որտեղ նա բաժանուեց մեզանից, քանի որ այնտեղ հայեր շատ կային:

Մեսրեմէի ճանապարհին մեծ քոյրս՝ Արշալոյսը, որի ոտքը կաղ էր, այլեւ չկարողացաւ քայլել եւ եղբայրս նրան 24 ժամ, մերթ քարշ տալով եւ մերթ նոյնիսկ շալակած՝ հասցրեց Մեսրեմէ:

Երբ մեր կարաւանը մօտենում էր Մեսրեմէին, մի անսպասելի դէպք պատահեց: Ես նկատեցի յանկարծ, որ դիմաւորողների մէջ էր նաեւ հայրս: «Հայրիկ» գոռալով վազեցի: Խեղճ եւ թշուառ վիճակում էր հայրս, որ մի ամբողջ ձմեռ մնացել էր Մեսրեմէում:

Հագարաւոր վրանների կային Մեսրեմէում: Բուն գիւղը մեզանից որոշ հեռավորութեան վրայ էր գտնուում: Այնտեղ մեր բարեբախտութիւնն այն էր, որ Եփրատի հենց ափին էինք գտնուում, իսկ անապատում դա մեծագոյն յաջողութիւն է: Գետը լի էր հայերի դիակներով, որոնք լողում էին ջրի

երեսին, եւ որպէսզի կարողանայինք ջուր խմել, կաշուէ տիկերի մէջ էինք լցնում, ապա աղտը ջրի տակ իջնելուց յետոյ երեսից վերցնում եւ խմում էինք:

Մի ամիս Մեսրեմէում մնալուց յետոյ մեզ քշեցին Աբու Հարայրա: Գանապարհն անցանք եզան սայլերով, որոնք պետութիւնը վարձով էր տալիս: Մեր ընտանիքը մի սայլ վերցրեց, որի վրայ ոչ միայն մենք տեղատրուեցինք, այլեւ միքանի աղքատ երեխաներ: Իսկական տանջանք էր այդ ճանապարհորդութիւնը, որովհետեւ ճանապարհը սարսափելի ժայռոտ էր:

Աբու Հարայրայում մնացինք երկու ամիս: Սա արեւի մեծ էր, քան Մեսրեմէն: Այստեղ արաբները ծախում էին ձաւար եւ եզան միս: Բանջարեղէն կամ միրգ բոլորովին չկար:

Մի օր Աբու Հարայրայում մի ծերունի մօտեցաւ, որը ափի մէջ սխտոր էր ծախում: Սխտորը ամէն ճաշի մէջ գործածում էին որպէս հսկանեխիչ: Պարզուեց որ այս թշուառ ծերունին Պոլսի նշանաւոր Ռոբերտ Կոլեջի⁷ հայազգի տնօրէնն էր:

Բժիշկ չկար, դեղ չկար: Բժաւոր տիֆի համաճարակը հնձում էր: Բարեբախտաբար եղբայրս, որպէս դեղագործ, իր հետը առած էր մի փոքրիկ դեղատուփ, որի մէջ անհրաժեշտ դեղեր կային: Եղբայրս մեր կարաւանի միակ բժիշկն էր: Տարբեր կողմերից եկած բազմահազար ժողովուրդը շատ էր նեղում մանաւանդ կարիճներից:

Մի հայատեաց տասնապետ կար, որին ասում էին «Ղարս օնբաշի»: Մի առաօտ մեզանից մի քիչ հեռու վայնասուն փրթաւ. պարզուեց, որ բոլորովին ուրիշ տեղից եկած կարաւանից մի ամբողջ ընտանիքի այդ տասնապետը վառել էր: Պատճառը ինչ է՝ չիմացանք:

Արու Հարայրայից գնացինք Համամ: Այլեւս քշուառութեան գազաքնակտին էինք հասել: Բոլորի մագերը թափուած էին վարակիչ հիւանդութիւններից: Մեծ մասը խելագարուել էր: Անտէր եւ անօթի երեխաները աղբի մէջ գարի էին հաւաքում: Մի օր փոքր քոյրս եկաւ թէ՛ մի տղայ այնտեղ պառկած ջուր է ուզում: Տղան ասում էր. «Մայրիկ, ... ջուր»: Ջուր տուինք, բայց արդէն ուշ էր. տղան ջուրը խմեց եւ հոգին աւանդեց: Նոյնիսկ չիմացանք թէ ով էր:

Համամում երբ մի օր նստած էինք վրանում, երկու թուրք ժանդարս բերում էին ձիու վրայ նստած քօղով մի կնոջ: Հենց որ մեր վրանին մօտեցաւ կինը, երեսի քօղը վերցրեց եւ նորից ծածկեց: Տեսանք որ հօրեղբօրս կինն էր: Հայրս գնաց մանթըխա՞ նրա հետ տեսնուելու: Յետոյ իմացանք, որ արքայում հօրեղբօրս մահուանից յետոյ կաշառել էր ժանդարսներին, որոնք համաձայնել էին քրքուիւ հազուատով նրան Հալէպ հասցնել: Օգնել էր նաեւ նրա եղբայրը, որը Հալէպում էր:

Միս օրը, երբ նորէն նստած էինք մեր վրանի առջեւ, տեսանք մեր տաներէց Տէր Սահակը՝ մօրուքը սափրուած տանում էին սպանելու: Յետոյ լսեցինք որ պատահաբար ազատուել ու գնացել էր Ամերիկա:

Համամում արդէն նօսրացած էր գաղթականութիւնը: Մի առաօտ եկան եւ յայտնեցին, որ ոչ մի հայ չպիտի մնար եւ բոլորը պէտք է գնային Դէր Ջօր: Միս հօրեղբօրս (Միհրան) ընտանիքը այստեղ մեզ միացաւ: Ինքը Հալէպում մահացել էր, իսկ ընտանիքը՝ 4 հոգի, քշել էին այս կողմերը: Այսպիսով Չորրաջեաններս դարձանք 12 հոգի:

Յանկարծ, դեռ տեղից չշարժուած, հօրեղբօրս տղան եկաւ եւ ասաց, թէ կայնականը ուր արհեստաւոր-մասնագէտ ընտանիքի ուզում է Ռակկա՞ տեղափոխել եւ այնտեղ պահել: Տարբեր մասնագիտութիւնների եւ արհեստների տէր (դեղագործ, դերձակ, կօշկակակար, եւն.) մարաշցի ընտանիքներ ընտրուեցին, որոնց մէջ էինք նաեւ մենք: Մեր ուրախութիւնն անսահման էր:

Ժանդարսներն իրենց ձեռքով մեր վրանները մի կողմ տարան, իսկ մնացած ամբողջ հայութիւնը հետիոտն գնաց Դէր Ջօր եւ ուղղակի ջարդի մէջ ընկաւ:

Միս օրը ուր ընտանիք, բոլորս էլ բազմանդամ դարձած (քանի որ փրկելու նպատակով շատերին մեզ վրայ էինք վերցրել), սայլերով գնացինք Եփրատի ափը, մակոյկով անցանք եւ մտանք Ռակկա քաղաքը: Սա հին քաղաք է պարիսպներով: Հարուստ շուկայ ունէր, բայց մեզ մօտ այլեւս դրամ չէր մնացել: Մի սենեակ վարձեցինք եւ 12 հոգով տեղաւորուեցինք:

Մի օր եկաւ մի ժանդարս եւ հօրս անունը կանչելով տարաւ նրան: Մարտափահար վիճակում քաական սպասեցինք: Վերջապէս ուրախ վերադարձաւ [հայրս]: Պարզուեց, որ Ատոնդ եղբայրս, որն արքայից առաջ որպէս ենթասպայ բանակ էր տարուել, դիմել էր 4րդ բանակի գորահրամանատար Ջեմալ Փաշային եւ իր ընտանիքի վերադարձի թոյլտուութիւն ստացել: Սակայն փաստաթուղթը ուր հոգու անունով էր, եւ

ինչքան հայրս փորձեց կաշառել պաշտօնեային, չյաջողուեց հօրեղբորս ընտանիքին մեզ հետ տանել: Քարեքախտաբար մէկ տարի այնտեղ մնալուց յետոյ նրանք ես ազատուել եւ Հալէպ էին գնացել:

Մի բուրբ կառապան մեզ տարաւ Ռակկայից Հալէպ: Մեր ազգականութիւններից մէկը այնքան աղերսեց հօրս, որ մենք նրան կառքի մէջ առինք, եւ որպէսզի նրան չտեսնեն, վրան կարպետ դրեցինք եւ մենք էլ նստեցինք կարպետի վրայ: Խեղճ կինը կեանքը փրկելու համար ամէն ինչի համաձայն էր: Ճանապարհին մի ժանդարս մեզ կանգնեցրեց եւ վերցնելով մեր փաստաթուղթը ուզում էր պատռել եւ մեզ ետ բշել Դէր Չօր, սակայն կառապանը զսպեց նրան համոզելով, որ սա Ջեմալ փաշայի տուած անցաթուղթն է: Վերջապէս, հազի-հազ հասանք Հալէպ, որտեղ մէկ ամիս մնալուց յետոյ մեզ բշեցին Դամասկոս:

Մեր ամբողջ արտորը տեսել էր վեց ամիս:

Երկուս ու կէս տարի մնացինք Դամասկոսում:

1918 թուի վերջում, երբ արդէն զինադադար էր կնքուած, ֆրանսական կառավարութիւնը իր միջոցներով հայերին տեղափոխեց հիւսիս՝ Կիլիկիա տանելու մտադրութեամբ: Դամասկոսից ճանապարհ ընկանք հայկական եռագոյն դրօշը պարզած եւ «Յառաջ Նահատակ»¹⁰ երգելով: Ամէն կայարանում իջնում եւ եռագոյնը քաշած երգում էինք:

Հալէպում մեզ դիմաւորեց Տէր Դեռնդ քահանան¹¹, իմ ապագայ կեսրայրը, որը համոզելով ժողովրդին զսպել իր ոգետութիւնը, ծալեց եւ մի կողմ դրեց դրօշը՝ յորդորելով չհաւատալ ֆրանսիացիներին:

Ես ամուսնացայ¹² եւ մնացի Հալէպում, բայց 1919ի Մայիսին, վստահելով ֆրանսիացիներին, ծնողքս Կիլիկիայի հայերի զանգուածի եւ հայ կամաւորների հետ միասին ամբողջ ընտանիքով գնաց Մարաշ: Նրանք տեղատրուել էին մեր հին տանը, որտեղ անցած տարիներին մի բուրբ էր նստել:

Մակայն 1920ի Յունուարին ֆրանսիական զօրքերը յանկարծակի նահանջեցին՝ հայերին սրի բերանը բողնելով քենալականների առջեւ:

Միայն մարաշցիներից 3000 հոգի մեռաւ նահանջի ճամփին՝ ձիւնի վրայ, որն այդ տարի սարսափելի առատ էր:

Հօրս հիւանդութեան պատճառով մեր ընտանիքը մէկուկէս տարի մնաց Մարաշում եւ 1921 թուի վերջում, Հալէպի ճանապարհով անցաւ Եգիպտոս, ուր մենք արդէն հաստատուել էինք:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Լուսաբերի հայրը Յովհաննէս Չորբաջեանն է: Յովհաննէսի հայրն է Յարութիւն Չորբաջեանը, իսկ պապը՝ նշանատր իշխան Հաջի Դեօվլաթ Չորբաջեանը (Հաճի Տեօվլէթ Չորպաճեան): Լուսաբերի մայր Մարիամը դուստրն է Գեորգ աղա Մուրադեանի՝ Մարաշի մէկ այլ յայտնի գերդաստանի զաւակ:

² Ասորական ձեռով՝ Նիսիքին, հայկական Մծբինը: Այն ներկայիս քաղաք է Թուրքիայի Մարդինի նահանգում, Սիրիայի սահմանակից:

³ Բիրեջիք կամ Բիր, քաղաք Ուրֆայի նահանգում, Եփրատ գետ ափին:

⁴ Արաբերէն Մանրից, ասորերէն Մաքրուգ, քաղաք Սիրիայի Հալէպի նահանգում, Եփրատից մօտ 30 կմ. արեւմուտք:

⁵ Գաւառապետը:

⁶ Մեսրէնէն գտնուում է Սիրիայում, Մանրիցից հարաւ, Եփրատի ափին:

⁷ Robert College – Օսմանեան Կայսրութեան եւ Մերձաւոր Արեւելքի տարածքում ամերիկեան հնագոյն բարձրագոյն դպրոցը: Հիմնադրուել է 1863ին եւ նախատեսուած է եղել առաջին հերթին քրիստոնեայ փոքրամասնութիւնների համար: Յետագայում, հանրապետութեան շրջանում, այն պետականացուել է եւ այդ հիմքի վրայ ստեղծուել է ներկայիս Բողազիչի Համալսարանը, որը համարուում է լաւագոյնը Թուրքիայում:

⁸ Կառավարատուն:

⁹ Քաղաք կենտրոնական Սիրիայում: Նոյնանուն նահանգի կենտրոնն է, գտնուում է Հալէպից 160կմ. արեւելք, Եփրատի հիւսիսային ափին:

¹⁰ Խօսքը ՀՍԸՄի յայտնի քայլերգի մասին է:

¹¹ Մարաշի Սուրբ Քառասուն Մանկանց Եկեղեցու նախկին առագ քահանայ: Մարաշի թեմի Առաջնորդական Տեղապահ, նախկինում՝ հնչակեան գործիչ:

¹² Անուսինը Տէր Անունդի որդի Նահապետն էր:

THE MEMOIRS OF LUSABER DER GHEVONTIAN

(Summary)

HRANUSH KHARATIAN

Lusaber Chorbadjian-Der Ghevontian was born in Marash in 1902. She was deported with her family from her homeland in 1916. The family settled in Damascus. During the armistice the family returned to Aleppo and then to Marash. However, Lusaber got married in 1919 in Aleppo with Nahabed Der-Ghevontian and moved to Cairo in 1920. In 1948 the Nahabed-Lusaber Der Ghevontian family repatriated to Soviet Armenia. Lusaber with her eldest son, Haig and his family moved to the USA where she died in 1990.

In this eye-witness account, which was registered in 1966 in Yerevan, Lusaber recounts the story of the deportation of her paternal family. During the deportation, which extended for six months, their exodus took them to Biredjik, Mambudj, Meskene, Abu Harayra, Hamam, Rakka, Aleppo, Damascus and back to Aleppo. Lusaber recounts the hardships they faced during the uprooting and the deportation.

